12-րդ դասարանում կիսամյակի ամփոփման և սովորողների պետական ավարտական քննությունների կազմակերպման կարգ

նախագիծ

Միասնական քննություն չհանձնող 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին հանձնում է միայն այն առարկա(ներ)ի պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին կարող է մասնակցել այն սովորողները, ովքեր հունիս ամսին մասնակցելու են միասնական քննություններին:Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին անցկացվող պետական ավարտական քննություններ կարող է հանձնել միայն այն առարկաներից, որոնք չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև դեկտեմբերի 1-ը գրավոր դիմում են Ավագ դպրոցի ղեկավարին:

12-րդ դասարանում առարկայական ծրագրերով որոշված բոլոր թեմաների ուսումնասիրությունը իրականացվում է առաջին կիսամյակում և առաջին կիսամյակի արդյունքները ամփոփվում են մինչև դեկտեմբերի 20-ը:

Դեկտեմբերին անցկացվող քննությանը սովորողը կարող է մասնակցել, եթե՝

- չունի կիսամյակային և տարեկան անբավարար գնահատական տվյալ առարկայից
- կատարել է պայմանագրային վարձավճարը՝ հունվարը ներառյալ

Երկրորդ կիսամյակում 12-րդ դասարանի սովորողի ուսումնական գործունեության կազմակերպումը.

Երկրորդ կիսամյակում սովորողն իր անհատական ուսումնական պլանը կազմում է առավելագույնը շաբաթական 31 ժամ նվազագույնը 20 ժամ ծանրաբեռնվածությամբ՝ ընտրելով նվազագույնը 3 առարկա՝

- այն առարկաներից, որոնց պետական ավարտական քննությունը չի հանձնել դեկտեմբերին
- հանձնելու է միասնական, ներբուհական քննություն
- «Ցտեսություն» ուսումնական նախագիծ
- Ինքնակրթություն
- Ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաներ

Առարկայի առավելագույն ժամաքանակը շաբաթական 10 ժամն է, նվազագույնը՝ 4:

Դեկտեմբերին պետական ավարտական քննություն հանձնելու համար դիմել են՝

- Հայոց լեզու և գրականություն 20 սովորող
- Մաթեմատիկա 23 սովորող
- Հայոց պատմություն -24 սովորող
- Ֆիզկուլտուրայի ստուգարք 30 սովորող